ԵՂԵՌՆԸ ԵՎ ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ 1915-1916թթ.

ԼԻԼԻԹ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Ինչպես հայտնի է, Օսմանյան կայսրությունում պետական քաղաքականություն դարձած պանիսլամիզմի և պանթուրքիզմի ծրագրերում Հայաստանի հայաթափումը, հայերի բնաջնջումն ու ձուլումը կարևոր և հրատապ խնդիրներից մեկն էր: Հայտնի է նաև, որ Հայկական հարցը քիչ աղմուկով և մեծ հաջողությամբ «լուծելու», հայ տարրից ազատվելու, դրանով իսկ «Մեծ Թուրանի» ստեղծման ճանապարհը հարթելու, հայերի հարստությունները յուրացնելու համար կառավարող երիտթուրքական կուսակցության կենտրոնական կոմիտեն, կառավարությունն ու իշխանության տեղական մարմիններն օգտագործեցին պատերազմական իրադրությունը: Հանգամանորեն նախապատրաստված ծրագրով 1915-1916թթ. իրագործվեց արևմտահայերի ցեղասպանությունը՝ Հայոց մեծ եղեռնը: Արևմտյան Հայաստանում և Թուրքիայի հայաբնակ վայրերում կոտորվեց, տեղահանվեց և բռնագաղթի ճանապարհներին ոչնչացվեց կամ Միջագետքի անապատներում բնաջնջվեց շուրջ 1.5 միլիոն հայ, որը կազմում էր հայ ժողովրդի ընդհանուր թվաքանակի մեկ երրորդը և նրա արևմտյան հատվածի երկու երրորդը: Բայց բարբարոսությունները դրանով չսահմանափակվեցին: Բռնի կերպով մահմեդականացվեցին մոտ 200 հազար հայ, շուրջ մեկ միլիոնը սփռվեց աշխարհով մեկ, ավերվեցին ու թալանվեցին Արևմտյան Հայաստանի և հայերի նյութական ու հոգևոր արժեքները: Այս ամենը եղեռնի ուղղակի հետևանքներն էին...

Երիտթուրքական կառավարությունը պաշտոնական հաղորդագրություններում ճարպկորեն թաքցնում էր հայերի տեղահանման փաստը, աշխատում էր թույլ չտալ հայության բնաջնջման լուրերի տարածումը թե՛ փոստի, թե՛ հեռագրի միջոցով: Նույնիսկ չեզոք երկրների դեսպանությունների և հյուպատոսությունների համար անհնար էր որևէ նյութ հաղորդել ոչ այնքան պատերազմական իրավիճակի, որքան այն պատճառով, որ բոլոր հեռագրերն ու նամակները, դեպքերի ժամանակակիցների վկայությամբ, նախքան հասցեատիրոջը հասնելն անցնում էին Թալեաթի և Էնվերի գրասենյակներով:[1] Իսկ եվրոպական հասարակական կարծիքին հայտնի դարձած փաստերը երիտթուրքական կառավարությունը հերքում

էր կամ պատճառաբանում՝ որպես հայերի «հեղափոխական ելույթները» ճնշող միջոցառումներ կամ էլ ռազմավարական նպատակներով և հայության կյանքի ապահովության նպատակով բնակչության տեղափոխություն:[2]

Այնուամենայնիվ, եղեռնագործությունը հնարավոր չէր թաքցնել: Շուտով Եվրոպա հասան դեպքերին ականատես և իրազեկ եվրոպական պետությունների դիվանագիտական ու հոգևորական առաքելությունների անդամների վկայությունները, Օսմանյան կայսրությունում և տարագիր հայերի խլյակներին ապաստան տվող երկրներում ծառայող հյուպատոսների ու դեսպանների գրությունները, որոնցում ուղղակի թե անուղղակի կերպով արտահայտվում էր «հայերի հեղափոխական ելույթների» կամ «կյանքի ապահովության նպատակով ռազմական գործողությունների վայրերից նրանց հեռացնելու» մասին թուրքական կառավարող շրջանների փաստարկների սնանկությունը:[3] Այս տեսանկյունից հատկապես կարևորվում են այն փաստաթղթերը, որոնցում արևմտահայերի նկատմամբ երիտթուրքական կառավարության քաղաքականության իսկական դեմքը մերկացնում են Թուրքիայի դաշնակիցներ կայզերական Գերմանիայի ու Ավստրո-Հունգարիայի դիվանագետները, պետական ու ռազմական գործիչները, որոնք քաջատեղյակ էին Թուրքիայի ներքին դրությանը և իբրև դաշնակից պետության ներկայացուցիչներ «չէին գունազարդում» փաստերը՝ հօգուտ հայերի:[4] Թեև պաշտոնական հավաստի աղբյուրները վկայում էին երիտթուրքական ոճրագործությունների մասին, այնուամենայնիվ, կայզերական Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի, Իտալիայի կառավարությունները, Թուրքիայի դաշնակիցները լինելով, շահագրգռված չէին արգելակել հայերի տեղահանությունը կամ, գոնե, դատապարտել հայերի բնաջնջման երիտթուրքերի քաղաքականությունը: Ավելին, աշխարհի հասարակական կարծիքի քննադատությանը հակառակ, նրանք արդարացնում և հովանավորում էին դաշնակցի հակամարդկային գործելակերպը, որով ավելի էին ոգևորում թուրքական իշխանություններին:[5]

Ստեղծված պայմաններում հայերի ցեղասպանությունը դատապարտելու և դադարեցնելու տեսանկյունից առավել կարևորվում էր Թուրքիայի ու գերմանաավստրիական խմբավորման հետ թշնամական հարաբերություններ ունեցող Եռյակ համաձայնության երկրների դիրքորոշումը:

Մեծ տերությունների կառավարող շրջանների ուշադրությունը հայերի զանգվածային տեղահանությունների ու կոտորածների վրա բևեռելու նպատակով, տակավին 1915թ. ապրիլի 7-ին Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ 5-րդը դիմել էր Ռուսաստանի արտաքին գործերի նախարարին, դեռևս պատերազմի մեջ չմտած Իտալիայի թագավորին ու ԱՄՆ-ի նախագահին՝ խնդրելով հնարավոր բոլոր միջոցներով պաշտպանել Արևմտահայաստանում զոհվող անմեղ քրիստոնյաներին, Բ. Դռան առջև միջամտել՝ հայերի ջարդը դադարեցնելու պահանջով: Հենվելով այդ փաստաթղթի վրա՝ Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Ս. Սազոնովը հրահանգել էր Հռոմի ու Վաշինգտոնի ռուսական դեսպաններին՝ կայսերական կառավարության անունից զորավիգ լինել կաթողիկոսի խնդրանքին:[6] Միաժամանակ, Ռուսաստանն իր դաշնակիցներին պաշտոնապես տեղեկացրել էր Թուրքիայում կատարվող հանցագործությունների մասին և առաջարկել հրապարակել համատեղ հայտարարություն՝ Թուրքիայի նախարարների խորհրդի անդամներին, ինչպես նաև հայերի կոտորածներին ուղղակի

առնչված թուրք պաշտոնյաներին «անձամբ պատասխանատու համարելու» մասին: Մինչ Լոնդոնում մի կողմ կոչեին անվճռականությունն ու կհայտնեին պաշտոնական դիրքորոշումը, Բ. Դոանն իրենց կառավարությունների բողոքները ներկայացրին Կոստանդնուպոլսի ամերիկյան, իտալական ու բուլղարական ներկայացուցիչները:[7] Իսկ մայիսի 4-ին Հայոց վեհափառ հայրապետը դիմեց Ջորջ 5-րդ թագավորին՝ խնդրելով հրահանգել չեզոք երկրների քրիստոնական դիվանագիտական ներկայացուցիչներին, որպեսզի այդ պետությունների կառավարությունների ազդեցիկ միջամտությամբ վերջ տրվեր «թուրքական մոլեռանդությանն ու կատաղությանը թողնված թրքահայության ահավոր հալածանքին»:[8] Սակայն Լոնդոնում հապաղում էին, իբր տարակուսում էին, որ ջարդերի դատապարտումը մեղմացնող ազդեցություն ունենալու փոխարեն կարող էր, ընդհակառակը, թուրքական իշխանություններին «զրգռել» քրիստոնյաների նկատմամբ «ավելի ևս վրեժխնդիր լինելու»: Թվում է, թե Լոնդոնում նույնիսկ հույս չունեին, որ նման հայտարարությունը թուրքերի համար դառնար արգելակիչ ազդակ: Նույն պատճառաբանությունն ուներ նաև ֆրանսիական կառավարությունը: Չնայած դրան, Անտանտի երկրները գիտակցում էին ցեղասպանությունը դատապարտելու, այն կազմակերպողներին ու իրականացնողներին մերկացնելու անհրաժեշտությունը, որովհետև կատարվածը հանցագործություն էր, ուղղված մարդկության դեմ: Դաշնակիցները կարևորում էին նաև այն հանգամանքը, որ ցեղասպանությունն իրագործվում էր պատերազմական հակառակորդ հանդիսացող Թուրքիայում, իսկ նրա հակամարդկային գործելակերպը հովանավորում էր նրա դաշնակիցը՝ համաշխարհային պատերազմը սանձազերծած Գերմանիան: Բնական է, որ Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան և Ռուսաստանը պետք է օգտագործեին իրենց թշնամու դատապարտելի արարքների մասին զանազան աղբյուրներից ստացած տեղեկությունները, հանրային կարծիքը հակառակորդ պետությունների անարդարության, անգթության, բռնի ուժի գործադրման փաստերի դեմ տրամադրելու նպատակով: Այդ տեսանկյունից Լոնդոնում հատկապես կարևորում էին ամերիկյան հասարակական կարծիքի վրա ազդելու անհրաժեշտությունը՝ չեզոք Միացյալ Նահանգները պատերազմին մասնակից դարձնելու ակնկալիքով:[9] Հայերի ցեղասպանության դատապարտումը մեկ այլ շահադիտական նպատակ էլ ուներ՝ չկորցնել հայերի աջակցությունը պատերազմում:[10] Չէ որ ավելի քան 150 հազար ռուսահայեր կռվում էին ռուսական բանակում և հազարավոր ուրիշները հայկական սիյուռքից զինվորագրվել էին բրիտանական ու ֆրանսիական բանակներին:

Ռուսական կառավարությունն առաջարկվող հայտարարությունը դաշնակիցներին հանձնեց Լոնդոնի ու Փարիզի ռուսական դեսպանների միջոցով: Սկզբնական նախագծում առկա այն ակնարկը, թե այս ոճիրները «քրիստոնեության դեմ» են գործվում, հանվեց Փարիզի բրիտանական դեսպան Բերտիի առաջարկությամբ և Մեծ Բրիտանիայի ու Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարների համաձայնությամբ: Նրանք պատճառաբանեցին, որ չեն կարող անտեսել բրիտանական ու ֆրանսիական տիրապետության ներքո գտնվող ոչ քրիստոնյա բնակչության կրոնական զգացմունքները: Ի վերջո, 1915թ. մայիսի 24-ին Ռուսաստանի նախաձեռնությամբ Անտանտի կառավարությունները միասնաբար, հրապարակային հայտարարությամբ դատապարտեցին հայերի կոտորածները: Փաստա-

թոլքն ուներ հետևյալ բովանդակությունը. «Վերջին մեկ ամսվա ընթացքում օսմանյան իշխանությունների ակնհայտ, հաճախ էլ նույնիսկ ուղղակի աջակցությամբ տեղի է ունենում հայերի կոտորած: Ապրիլի կեսերին նոր թափով այդպիսի կոտորածներ են տեղի ունեցել Էրզրումում, Դերջանում, Ակնում, Բիթլիսում, Մուշում, Սասունում, Զեյթունում և ամբողջ Կիլիկիայում: Վանի շրջակայքում հարյուրավոր գյուղերի բնակիչներ ամբողջապես կոտորվել են: Վան քաղաքի հայկական թաղամասը պաշարել են քրդերը: Միևնույն ժամանակ թուրքական կառավարությունը ձերբակալում և աննախադեպ ճնշումների է ենթարկում Կոստանդնուպոլսի անմեղ հայ բնակչությանը:

Թուրքիայի կատարած այս նոր ոճրագործություններն ընդդեմ մարդկության ու քաղաքակրթության, պարտավորեցնում են Ռուսաստանի, Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի կառավարություններին հրապարակավ հայտարարելու Բ. Դռանը, որ իրենք կատարված հանցագործության անձնական պատասխանատվությունը դնում են թուրքական կառավարության բոլոր անդամների, ինչպես նաև տեղերում կառավարության այն ներկայացուցիչների վրա, որոնք մասնակցել են կոտորածին»:[11]

Հայտարարությունն առանձնահատուկ է նրանով, որ սահմանում էր Անտանտի կառավարությունների միասնական պարտավորությունը՝ պատերազմից հետո ճանաչել թուրքական կառավարության և տեղական իշխանությունների պատասխանատվությունը կատարված հանցագործության համար: Փաստաթղթում տերություններն իրենց պարտավորությունը հիմնավորեցին «Թուրքիայի կատարած այս նոր ոճրագործություններ»՝ արտահայտությամբ, դրա մեջ ներառելով ոչ միայն 1915թ. սահմոկեցուցիչ դեպքերը, այլև՝ 1894-1896թթ. հայկական կոտորածները, որոնք Հայոց մեծ եղեռնի նախերգանքն էին եղել: Հայերի ցեղասպանությունը որակվեց իբրև «հանցագործություն ընդդեմ մարդկության ու քաղաքակրթության»: Այդ բնորոշումը նախադեպ ստեղծեց միջազգային իրավունքում շրջանառության մեջ մտցնել **«ոճրագործություն ընդդեմ մարդկության ու քաղաքակրթության»** հասկացությունը:

Ժամանակն անցնում էր, բայց Համաձայնության տերությունների հայտարարությունը գործի վերածվելու միտում չուներ: Կառավարական բարձր շրջաններում տիրող անտարբերության մթնոլորտում սովորական էր ընդունվում մի ողջ ժողովրդի ցեղասպանության փաստը, լուրջ վերաբերմունք չէր ցուցաբերվում այն հանգամանքին, որ մարդկության դեմ գործվում էր ոճրագործություն, որ միջազգային հարաբերություններում, ազգային հարցի լուծման ոլորտում ամրապնդվում էր նոր, հակամարդկային եղանակ՝ ցեղասպանության պետական քաղաքականությունը: Հարցին այս տեսանկյունից մոտենալու փոխարեն բրիտանական կառավարությունը հրաժարվեց անգամ մասնակցել արևմտահայ գաղթականներին նյութական օգնություն ցույց տալու նպատակով 1916թ. հունվարին Ռուսաստանի նախաձեռնած ծրագրին: Ըստ այդ ծրագրի, հավասար մասնաբաժիններով հավաքված անգլո-ֆրանս-ռուսական մեկ միլիոն ֆրանկի միացյալ և միանվագ դրամական օժանդակությունը Կ. Պոլսի հայոց պատրիարքի կամ Սսի կաթողիկոսի տրամադրության տակ էր դրվելու ամերիկյան դեսպանի կամ էլ հայերին էր բաշխվելու ամերիկյան գործակալների միջոցով: Ընդ որում, գումարի աղբյուրը գաղտնի էր պահվելու՝ թուրքական կառավարության նոր բռնարարքների վտանգից հայերին զերծ պահելու հա-

մար:[12] Մեծ Բրիտանիայի ֆինանսների նախարարության կարծիքով ավելի նպատակահարմար էր, որ այդ գործը ստանձնեին մասնավոր հիմնադրամներն ու անհատները: Իսկ արտաքին գործերի նախարարությունում գտնում էին, որ նկատի առնվող նպատակն այնքան «ազդեցիկ չէր» բրիտանական շահերի համար, որպեսզի արդարացվեր պետական բյուջեից մոտավորապես 20 հազար ստեռլինգի (որը միացյալ օժանդակության մեջ Մեծ Բրիտանիայի մասնաբաժինն էր) տրամադրումը դեպի Հալեպ-Մոսուլ ճանապարհի շրջան և ավելի հեռու՝ դեպի Բաղդաղ աքսորված հայերին: Նախարարության պատասխանատու պաշտոնյա Հարոլդ Նիքոլսոնի կարծիքով «նվիրատվության ամբողջ նպատակը Միացյալ Նահանգներում նրա ունենալիք ազդեցությունը պիտի լիներ, և անարժեք էր լինելու այդ նվիրատվությունը, եթե գաղտնի պահվեր»:[13] Ահա թե ինչու ամերիկացի թղթակիցներին փոխանցված հայտարարությունները և տեղեկագրերը, ինչպես նաև թուրքական վայրագությունները նկարագրող «Կապույտ գիրքը» ավելի օգտակար էին արտաքին գործերի նախարարության համար Բրիտանիայի պետական շահերի տեսանկյունից, քան գաղտնի մասնակցությունը հայկական որևէ նպաստի:

Բրիտանական կառավարության հրաժարումը ենթադրում էր նաև ֆրանսիական կառավարության հրաժարում արևմտահայության՝ Մեծ եղեռնից մազապուրծ հատվածներին դրամական աջակցություն ցույց տալու գործից, որովհետև նա այդ մարդասիրական առաքելությանն իր մասնակցությունը պայմանավորել էր բրիտանական կողմի մասնակցությամբ:[14] Հարցին թերևս ավելի լրջորեն էր մոտենում Ռուսաստանի արտաքին գործերի նախարարությունը: Բայց այս դեպքում էլ, ինչպես վկայում է 1915թ. դեկտեմբերի 18-ին արտգործնախարար Ս. Սազոնովին ուղարկված նամակը, ֆինանսների նախարարությունը հնարավոր չէր համարում «առկա ֆինանսական դրության պայմաններում» գանձատան վրա «պետական անհրաժեշտությամբ չթելադրված ծախս դնելը», «մանավանդ, որ այդ գումարը նախատեսվում էր փոխադրել թշնամական երկիր՝ թշնամու հպատակներին օգնություն ցույց տալու նպատակով»:[15] Պարզվում է, ցարական կառավարությունը մեծ տերությունների առջև պաշտպանում էր իր իրավունքներն Արևմտյան Հայաստանում, իսկ նրա բնիկներին՝ հայերին անհրաժեշտ չէր համարում օգնել՝ պատճառաբանելով, որ նրանք «թշնամու հպատակներ» են:

Իրականում, 1915թ. աշնանից Մեծ Բրիտանիայի ու Ֆրանսիայի, իսկ 1916թ. գարնանից նրանց և Ռուսաստանի միջև բանակցություններ էին տեղի ունենում Թուրքիայի ասիական տիրույթների, այդ թվում և Արևմտյան Հայաստանի բաժանման շուրջ: Օսմանյան «ժառանգությանը» տիրելը մի մասն էր նրանց նվաճողական ծրագրերի և տվյալ պահին ավելի կարևոր էր ու շահեկան, քան տարագիր հայերին օգնելը:

Այնուամենայնիվ, թուրքական կառավարության հայաջինջ քաղաքականությունը դատապարտելու և կայզերական Գերմանիայի թուրքամետ դիրքորոշումը մերկացնելու ուղղությամբ Անտանտի երկրների ձեռնարկած քայլերի ազդեցությամբ կատարվեց երկու դրական տեղաշարժ: Նախ, 1915թ. հունիսի կեսերին Գերմանիայի արտգործնախարարության, Կ. Պոլսի գերմանական դեսպանության ու հյուպատոսությունների կեցվածքում նկատելի դարձավ թուրքական դաշնակցի հակահայկական քաղաքականության քննադատումը:[16] Հարցն այն է, որ Անտանտի երկրների համա-

տեղ հայտարարությունից հետո առաջացել էր թուրքական գազանություններից սահմանազատվելու անհրաժեշտություն: Դա ուներ դիվանագիտական ու քաղաքական նշանակություն՝ պաշտպանել կայզերական Գերմանիայի հեղինակությունը հայերի ցեղասպանությանը մեղսակից լինելու վերաբերյալ թշնամական աշխարհի մեղադրանքներից:

Հայերի ցեղասպանության հարցում Անտանտի երկրների դիրքորոշումը նպաստեց նաև ԱՄՆ-ի քաղաքականության ճշգրտմանը: Նախ՝ 1915թ. դեկտեմբերի 1-ին «Նյու Յորք Թայմզում» հայերի ցեղասպանության հարցում նախագահ Վուդրո Վիլսոնի դիրքորոշման հրապարակումը, այնուհետև՝ ԱՄՆ-ի արտգործնախարարության երկու բողոքները, ներկայացված թուրքական կառավարությանը, վկայում էին այն մասին, որ ԱՄՆ-ն հայերի ցեղասպանության հարցում պաշտպանում էր Եռյակ համաձայնության երկրների քաղաքականությունը: Դրանով ԱՄՆ-ն նաև ընդգծում էր իր համակրանքը Անտանտի նկատմամբ:

Ահա հենց այս արդյունքներով էլ սահմանափակվեց Եռյակ համաձայնության երկրների միասնական քաղաքականությունը հայերի ցեղասպանության հարցում 1915-1916թթ.: Դիվանագիտական բողոքներն ու հայտարարությունները, տարագիր հայերին օգնելու վերաբերյալ խոստումներն ու նախագծերը, չնայած հարմարեցվում էին մեծ տերությունների քաղաքական շահերին, անշուշտ անհրաժեշտ էին, բայց՝ ոչ բավարար, հայերի սպանդը կանխելու համար:

Արևմտահայերի ցեղասպանության հարցում 1915-1916թթ. Եռյակ համաձայնության երկրների վարած քաղաքականությունը ցույց է տալիս, որ մարդկության դեմ ուղղված ոճրագործությունը հնարավոր չէ կանխել ո՛չ նեղ պետական շահերի և ո՛չ էլ անգամ պետությունների խմբի շահերի ընդհանրության պայմաններում: Միայն համամարդկային շահերի գիտակցումն ու այդ տեսանկյունից մշակված միջազգային իրավական, քաղաքական նորմերի հետևողական իրագործման ու դրա վերահսկողության միջոցով է հնարավոր կանխարգելել ոճրագործությունը կամ կանխել դրա ընթացքը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] Տե՛ս ՀՀ Պատմության կենտրոնական պետական արխիվ (այսուհետև՝ ՀՀ ՊԿՊԱ), ֆ. 422, g. 1, գ. 824, թ. 55:

[2] Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 282, g. 1, գ. 40, թ. 2, 4, 5: Աբեղյան Ա. Հայաստանը 1915 թվականին (մի քանի փաստաթղթեր), «Հայրենիք», Բոստոն, 1930 օգոստոս, էջ 33: Киракосян Дж. С. Младотурки перед судом истории, Ереван 1989, էջ 182:

[3] Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ ֆ. 57, g. 5, գ. 96, թ. 26-47: Bryce V. The Treatment of Armenians in the Ottoman Empire, 1915-1916. *Documents presented to Viscount Grey of Fallodon, Secretary of State for Foreign Affairs. With a Preface by Viscount Bryce, Laid Before the Parliament as an Official Paper and Now Published by Permission*, London, 1916, էջ 638: Հայոց ցեղասպանությունը Թուրքիայում բուլղարական դիվանագիտական փաստաթղթերի լույսի ներքո, Երևան,1996, էջ 10-36:

[4] Տե՛ս Армянский вопрос и геноцид армян в Турции (1913—1919). Материалы политического архива МИД кайзеровской Германии. Сборник под ред. В. Микаеляна, Ереван, 1995, док. от 16.07.1915, R 14086, Ab. 22101 с Приложением, док. от 05.08.1915, R 14088, zu Ab. 28584, док.от 10.18.1915 (Приложение 1), док. от 03.09.1915, док. от 06.09.1915, Konst. /Ankara, 170, Ab. 53a.

[5] Տե՛ս Deutschland und Armenien 1914-1918. Sammlung diplomatischer Aktenstucke. Herausgegeben und eigeleitet von Dr. Johannes Lepsius. Potsdam, 1919, էջ 96-97: Фирбюхер Г. Что скрыло кайзеровское правительство от немецких подданных. Армения, 1915. Уничтожение Турцией культурного народа. Ереван, 1991, էջ 68: Германские источники о геноциде армян. Период первой мировой войны. Сборник документов и материалов в 2—х томах под редакцией проф. Степаняна С., т. 1, Ереван, 1991, էջ 102:

[6] Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 26, թ. 34-35, 37, 38, գ. 28, թ. 156-157, 159-160:

[7] Տես Նասիպեան Ա. Թրքահայեր եւ Հայկական հարցը 1915-1923, Պէյրութ, 1994, էջ 74:

[8] Քաղվածքը տե՛ս նույն տեղը:

[9] Տե՛ս Les Grandes Puissances, L'empire Ottoman et les Arme'niens dans les archives Françaises 1914-1918, documents réunis et presentes pur Artur Beylerian. Paris, 1983, էջ 67:

[10] Տե՛ս Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում 1828-1923, (խմբագիր Կիրակոսյան Ջ.), Երևան, 1972, փաստ. 215, էջ 376-377: Նասիպեան Ա. նշվ. աշխ., էջ 75:

[11] Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում: Փաստաթղթերի և նյութերի ժողովածու (Մ. Ներսիսյանի խմբագրությամբ և նախաբանով), Երևան, 1991, էջ 727:

[12] Տե՛ս Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, փաստ. 216, էջ 377-378: Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, փաստ. 197, էջ 499:

[13] Քաղվածքն ըստ Նասիպեան Ա. նշվ. աշխ., էջ 83-84:

[14] Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, փաստ. 198, էջ 500:

[15] Տե՛ս Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, փաստ. 218, էջ 379-380:

[16] Կիրակոսյան Ջ. Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը 1914-1916թթ., Երևան, 1967, էջ 414-415:

Резюме

Геноцид армян и позиция держав Тройственного Согласия в 1915-1916гг.

Лилит Оганесян

Известно, что в 1915-1916гг. армянский геноцид осуществлялся под непосредственным руководством младотурецкого правительства. Преступную политику Турции поддерживали ее союзники – Кайзеровская Германия, Австро-Венгрия и Италия. Предосудительный образ их действий был умело использован державами Тройственного Согласия с целью склонить общественное мнение против Германии и ее союзников. Особенно важным для них было влияние на американское общественное мнение, чтобы втянуть США в войну на стороне держав Согласия. Иной целью Англии, Франции и России было – выиграть поддержку армян в войне.

24 мая 1915 года державы Тройственного Согласия выступили с заявлением осуждающим геноцид армян. Впервые они официально признали и оценили геноцид армян как "преступление против человечества и цивилизации" и наложили всю ответственность за совершенное на турецкое правительство. К сожалению, политика держав Согласия не перешла дальше осуществления их корыстных целей.

Предоставленные в статье факты приводят к заключению, что только путем осознания всеобщих интересов и последовательного осуществления разработанных, с этой точки зрения, международных правовых и политических норм, возможно предотвращение такого преступления, как геноцид.

Summary

The Armenian Genocide and the Attitude
of the Triple Agreement Powers in 1915-1916.

Lilit Hovhannisian

It is well known, that the Armenian Genocide in 1915-1916 was carried out under the direct guidance of the Young Turk Ittihadist government. The criminal policy of the Turkey was supported by its allies in World War I - Imperial Germany and Imperial Austria. Their reprehensive behaviour was skillfully used by England, France and Russia to win the public opinion over Triple Agreement Powers. It was highly important for them to influence on the American public opinion to involve the neutral USA into the war against Germany and its allies. At the same time it was no less important for England, France and Russia not to lose the support of the Armenians towards them in the war.

On May 24, 1915 the Triple Agreement Powers declared that they blamed the Genocide of Armenians. It was the first time, that the Great Powers had admitted and declared the Armenian Genocide "a crime against humanity and civilization" and put all the responsibility of the Genocide on the Turkish Government. Unfortunately, the policy of Allies didn't go beyond the mercenary purposes they aimed and successfully achieved.

The facts, given in this article, bring us to a conclusion, that the prevention of crimes like Genocide is possible only by understanding and appreciating mutual interests and the persistent and successful realization of the corresponding international juridical and political norms.